

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՁՆԹԵՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

1 օգոստոսի 2008 թ.

N 1

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊՈՒԴԻՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՏԱՀԱՆԿՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87 հոդվածի 2-րդ մասի պահանջները և Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ա» և «գ» կետերը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն *պաշտոնապես պարզաբանում է.*

Հայաստանի Հանրապետության [մաքսային օրենսգրքի](#) համաձայն ապրանքներ են համարվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող բոլոր տեսակի առարկաներն ու իրերը, այլ գույքը, այդ թվում՝ արժույթը, արժույթային արժեքները, էլեկտրական, ջերմային և այլ տեսակի էներգիան, փոխադրամիջոցները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «բ» կետով սահմանված տրանսպորտային միջոցների: Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխում է համարվում ապրանքների և տրանսպորտային միջոցների ներսերումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք կամ դուրսհանումն այդ տարածքից՝ ներառյալ միջազգային փոստային առաքումները, խողովակաշարով և էլեկտրահաղորդման գծերով փոխադրումները:

Ելնելով վերը շարադրվածից՝ էլեկտրոնային կապուղիներով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունից արտահանվող տեղեկատվությունը և դրամական փոխանցումները չեն համարվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխում և ենթակա չեն մաքսային ձևակերպումների:

Մ/Ծ գեներալ-մայոր

Գ. Խաչատրյան